Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

8 դեկտեմբերի 2011 թվականի N 48

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 28-26 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի նիստի «Գնման պայմանագրի օրինակելի ձևին հավանություն տալու մասին» N 28-26 արձանագրային որոշման (այսուհետ՝ որոշում) 3-րդ կետով հավանության արժանացած՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքների (ծառայությունների) կատարման պայմանագրի օրինակելի ձևին կից ներկայացված՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի տեխնիկական առաջադրանքում (այսուհետ՝ առաջադրանք) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) առաջադրանքի 2-րդ մասի «Պայմանագրի շրջանակը և ծավալը» հատվածի 8-րդ կետը և առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 18-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլ. անձնագրերի համար CSCA-ն պետք է մշակվի ICAO 9303 փաստաթղթի համաձայն: Մուտքի ընդլայնված վերահսկման ենթակառուցվածքը պետք է ընդգրկվի:».

2) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 60-ում և 69-ում «64 էջ» բառերը փոխարինել «40 էջ» բառերով.

3) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 64-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կրիչի հավաստիության ստուգում (chip authentication) և տերմինալ հավաստիության ստուգում (terminal authentication):».

4) առաջադրանքի 2-րդ մասում Քայլ 16-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էլեկտրոնային անձնագիրն ակտիվանում է այն քաղաքացուն տրամադրելուց հետո, իսկ նույնականացման քարտի ակտիվացման համար քաղաքացին պետք է օգտագործի PIN-ը, որը տրամադրվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից:».

5) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 71-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Թուղթը պետք է քիմիապես զգայուն լինի, որպեսզի բացահայտի յուրաքանչյուր փորձ՝ կատարելու ֆիզիկական փոխակերպումներ և օգտագործելու անվտանգության համար նախատեսված թղթի քիմիական զգայունացումը և անտեսանելի ֆլյուրոսցենտ ուլտրամանուշակագույն (UV) թանաք:».

6) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 73-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Անտեսանելի ֆլյուրոսցենտ ուլտրամանուշակագույն (UV) թանաքը պետք է օգտագործվի անվտանգ տպագրության համար:».

7) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 195-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մատնահետքերի սկանավորման տարածքը չպետք է պակաս լինի 81 x 76 մմ-ից:».

8) առաջադրանքի 3-րդ մասի Պահանջ 196-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նկարի տարածք՝ չորս հարթ մատնապատկերի համար՝ ոչ պակաս, քան 81 x 76 մմ-ից:».

9) որոշման 3-րդ կետով հավանության արժանացած՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքների (ծառայությունների) կատարման պայմանագրի օրինակելի ձևի՝

ա. 4.1-ին կետում «16 901 760 (տասնվեց միլիոն ինը հարյուր մեկ հազար յոթ հարյուր վաթսուն)» բառերը փոխարինել «16 895 680 (տասնվեց միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր ութսուն)» բառերով,

բ. 4.1.1-ին կետում «37.44» թիվը փոխարինել «37.42» թվով,

գ. 7.6-րդ կետի 1-ին ենթակետում «13665.6 /(0.04 n+365) եվրո» բառերը փոխարինել «13658.3/(0.04 n+365) եվրո» բառերով, իսկ «37.44» թիվը՝ «37.42» թվով.

10) որոշման 3-րդ կետով հավանության արժանացած՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի համակարգի ներդրման աշխատանքների (ծառայությունների) կատարման պայմանագրի օրինակելի ձևին կից ներկայացված գնման ժամանակացույցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Տարեթիվը	Կենսաչափական անձնագիրը (հատ)	Նույնականացման էլեկտրոնային քարտը (հատ)	Մեկ կենսաչափական անձնագրի գինը	Մեկ նույնականացման էլեկտրոնային քարտի գինը	Ընդհանուր գումարը
2012 թ.	50 000	150 000	37,42 եվրո	5,52 եվրո	2699000
2013 թ.	60 000	200 000	37,42 եվրո	5,52 եվրո	3349200
2014 թ.	64 000	210 000	37,42 եվրո	5,52 եվրո	3554080
2015 թ.	64 000	220 000	37,42 եվրո	5,52 եվրո	3609280
2016 թ.	66 000	220 000	37,42 եվրո	5,52 եվրո	3684120
Ընդամենը	**304 000**	**1 000 000**			**16 895 680 եվրո**

»:

2. Հավանություն տալ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրի և նույնականացման քարտի արտաքին ձևին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. դեկտեմբերի 21
Երևան